ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 16 » հոկտեմբերի 2019 թվականի N: 497-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՎԱՐԴԱՔԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N224-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 32-րդ և 46-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ կետի 2-րդ, 3-րդ, 4-րդ ենթակետերի, 7-րդ, 9-րդ, 11-րդ, 13-րդ, 15-րդ, 17-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Վարդաքար համայնքի ղեկավարի 2019 թվականի հուլիսի 2-ի N107 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

«Վարդաքարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2019 թվականի հունիսի 20-ի նիստի թիվ 8 արձանագրությունը, ծնողական խորհրդի 2019 թվականի հունիսի 24-ի նիստի թիվ 4 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ժամկետը լրանալու կապակցությամբ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Վարդաքարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Դպրոց) կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամներ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Գեղամ Բաղդասարյանի, Վաղինակ Հովհաննիսյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Վարդաքար համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Գալուստ Ավետիսյանի, Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Աննա Մաիլյանի, Նարինե Զուռնաչյանի, Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված Աննա Կիրակոսյանի, Անուշ Կիրակոսյանի լիազորությունները:

2. Խորհրդի անվանական կազմում երեք տարի ժամկետով հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Ալբերտ Մարգարյանին, Վարդան Սահակյանին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Վարդաքար համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Հովհաննես Հարությունյանին, Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Հասմիկ Կարապետյանին, Սերյոժա Ստեփանյանին, Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված Մարգարիտ Բարսեղյանին, Լիլիթ Սարգսյանին:

3. Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի հունիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Վարդաքարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի N51-Ա որոշման մեջ փոփոխություն

կատարելու մասին» N224-Ա որոշման հավելվածում «Բաղդասարյան Գեղամ», «Հովհաննիսյան Վաղինակ», «Ավետիսյան Գալուստ», «Մաիլյան Աննա», «Զուռնաչյան Նարինե», «Կիրակոսյան Աննա», «Կիրակոսյան Անուշ» բառերը համապատասխանաբար փոխարինել «Մարգարյան Ալբերտ», «Սահակյան Վարդան», «Հարությունյան Հովհաննես», «Կարապետյան Հասմիկ», «Ստեփանյան Սերյոժա», «Բարսեղյան Մարգարիտ», «Սարգսյան Լիլիթ» բառերով:

Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝